


Հ Ա Ս Յ Է
Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ՆԳԻՊՑՈՍ
Տարեկան դրոշմը 30
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Տարեկան գրանգ 10

Բաժանարար 3ԱԵԼՈՒՄ Գեորգի փոխարեն
գնառուի գերմ պիտի բլլան :

Ձի հրատարակումը ձեռնարկները
ևս չե՛ն տրուիր :

Բաժանորդագրությունը կանխիկ է, իսկ
ժանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնությամբ :

Ազգեամբարից Նեեկայացուցիչ
Յ. Պ. ՏՈՒՐՈՒՆԵԱՆ
Թաղից Բաշա Թ. 67

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Թ Ե Ր Թ

Թե՛ ՍՐՇԱՆՈՍՈՒՄ եւ թե՛ ՏՊՕՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքակաւ խնդրոց համար
պէտք է դիմել հրատարակչական հասցեով
քերթի Մասնատարին, որ կ'...

ԳԵՈՐԳԻ ՓՈՒԹՈՂԵԱՆ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանու-
տու են իրենց գրածներու

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂԶ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

- 1. - Կազմակերպիչը 2. Կազմակերպիչը գործերը 3. - Նպատակ 4. - Արդիւնք 5. - Ա. Բ. Տ. Ս. Ներկայացուցիչները 6. - Հասցեատարները 7. - Ընկերութեան անցեալը 8. - Ներկան 9. - Ապագան 10. - Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով 11. - Կանոնագիր :

ԳՍ.ՉՄԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ներքոյի Հովիտը ընկերութիւն
ներու երկիրը եղաւ ժամանակէ մը
ի վեր խոտի պէս բուսան անոնք,
ու ճոխանի հոշակաւոր դժբերին
պէս խորշակահար իրկան : Ետեւ-
րուն հետքերը անդամ չ'մնաց. ու
պէտք էր որ այնպէս ըլլար, որով-
հետեւ անոնցմէ և ոչ մին արդա-
ւանդ հողի վրայ չ'հետուած սերմե-
րէ կը գոյանար...

Եգիպտոսի եկող գաղտը ընկե-
րութիւններուն թիւին վրայ ստոյգ
գաղտնիք մը կազմելու համար
վերջապէս, կը յուսամ թէ բաւա-
կան պիտի ըլլայ անոնք բազմա-
տեղը Եգիպտոսի արտադրած արմաւ-
ներուն թուոյն հետ : Եւ որպէսզի
ստոյն ստոյգ մէկ թուահամարը
կարելի չ'ըլլայ գտնել, անցեալ տա-
րիներ կանխամտածեալ խոհակա-
նութեամբ մը՝ մեր Ազգային կալ-
ուածներուն մէջէն 1000 հաս «Ար-
մաւներ» ի ծառեր անհետացուցին
ամէն գնով՝ ա՛յնպէս որ ալ հարկ
չ'պիտի ըլլայ ո՛չ արմաւներուն
հաշիւը գտնելու դիւրութիւնը ու-
նենալ, և ոչ ալ Եգիպտոսաւոր
ընկերութիւններուն վրայ մտածել՝
ստոյգ վիճակագրութիւն մը կազ-
մելու համար :

Այս բազմերանդ ընկերութեանց
աղբերակներուն դառնահամ ջուրը
ըմպելի վիճակի մը մէջ գնող ա-
ւատաւորս վտակն է ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱ-
ՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒ-
ԹԻՒՆԸ, որուն ակը՝ բարձրաբերձ
լեռներու ստորոտը կը գտնուի յասակ
ու զտուած ջուր միայն արտադրելու
սահմանուած, և ուր՝ մարդկային տե-
սակ մը պտտուած հետքեր և զա-
նազան գծուած հայրենիք անհասա-
նելի պիտի մնան պլտորելու համար
անոր գոյնը ու զովարար հեղուկը,
որ կարկաճահոս պիտի սահի անցնի
գեղուղէջ ծառաստաններէ, արգա-
ւանդ դաշտերէ, գեղապատարճ հո-
վիտներէ, ու հասնի Հայաստանի
բազմապարար զաւակներուն տա-
պատենը և պապակեալ լեզուները
թրչելու :

Այս է և պիտի ըլլայ վերկա-
րար դերը Հ. Բ. Ը. Միութեան :
Առանց մի առ մի և յականէ
յանուանէ թուելու Եգիպտոսայ
բազմաթիւ ընկերութիւններուն ա-

նոնները, որ ամենազժուարին վի-
ճակագրութիւնով մը զբաղել կը
նշանակէ, անմիջապէս կրնանք ը-
սել թէ՛ անոնցմէ և ոչ մին Եգիպ-
տական Կառավարութեան ուղղակի
պատահութիւնը գրաւած է : Իսկ այս
կարեւոր առաւելութեան վրայ ա-
նոնցմէ ոչ մէկն ալ մտածած չէ, և
ատկէ տարբեր բան չէին կրնար ը-
նել արդէն :

Հ. Բ. Ը. Միութիւնը զանց չէր
կրնար ընել այդ պարագան, ու յի-
տագայ նամակները՝ որ տեղեկա-
գիրներուն մէջ ալ գրուած են,
ցոյց կուտան թէ՛ Միութեան յա-
րատեւութիւնը ամէն կասկածներէ
վեր բռնելու համար, ինչ հոգա-
ծու կանխատեսութիւններ ունեցած
են Անոր մեծապարզ Հիմնադիրները :

Ահա պատճէնները այդ նա-
մակներուն :

Ի Կահիրէ, 12 Ապրիլ 1908

Տէր Նախարար

Պատիւ ունիմք Ձեր Վսեմու-
թեան տեղեկացիւթէ՛ հիմնած եմք
բարեգործական ընկերութիւն մը,
« Հայկական Բարեգործական Ընդհա-
նուր Միութիւն » անուամբ, որուն
նպատակն է օգնել մեր տարաբաղդ
հայրենակցաց :

Ձեր Վսեմութիւնը ներկայիս
կցորդեալ պիտի դռնէ սոյն ընկե-
րութեան Կանոնագրութեան օրի-
նակ մը :

Համարում եմք թէ՛ Ն. Բ. Կա-
ռավարութիւնը բարեպալամ աչօք
պիտի հայի զուտ մարդասիրական
հաստատութեան մը՝ որ բացորոշա-
պէս կը մերժէ ո՛րէն քաղաքական
հանգամանք, և որ սահմանուած
է Հայոց նիւթական և բարոյական
կացութիւնը բարեւթելու :

Հաստատապէս յուսալից եմք
թէ՛ Ձեր Վսեմութիւնը պիտի բա-
րեհաճի մեզ շնորհել իւր ակադեմի-
թիւնը, որպէսզի մեր Հ. Բ. Ը. Մի-
ութիւնը ճանչցուի Ն. Բ. Կառավա-
րութեան կողմանէ :

Հաճեցէք ընդունիլ, ևն.
(Ստոր.) ՊՕՂՈՍ ՆՈՒՊՍՐ
ԵԱԳՈՒՊ ԲԱՇԱ ԱՐԹԻՆ

Ն. Վ. ՄՈՒՍՍՈՒՅԱ ՖԷՀՄԻ ԲԱՇԱ
Ներքին Գործոց Նախարար

ՊԱՏԱՌԻՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԷՆ
Գահիրէ, 7 Մայիս 1906

Վսեմաշուք Տիարք.

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ
թէ՛ ստացած եմ Ձեր Ապրիլ 12 թը-
ւակիդ նամակը, որով բարեհաճած
էք ինձ յղել « Հայկական Բարեգոր-
ծական Ընդհանուր Միութիւն » ան-
ուամբ Ձեր հիմնած բարեգործական
ընկերութեան Կանոնագրէն օրի-
նակ մը :

Իրաւունք ունիք խորհելու թէ՛
Կառավարութիւնն ամենամեծ բար-
եպալամութեամբ միայն կրնար նը-
կատել այսպիսի Հաստատութիւն մը,
որուն գերազանցօրէն և բացարձա-
կապէս մարդասիրական հանգաման-
քը՝ գոյեցողի միայն արժանի է :

Կը շնորհաւորեմ Ձեզ որ Հա-
յոց նիւթական և բարոյական վիճա-
կի բարեւումն հոգածու կը գըտ-
նուիք, և Կառավարութիւնն ըն-
դունելով այդ գործի օգտակարու-
թիւնը՝ յաջողութիւն կը մալթէ
անոր :

Հաճեցէք ընդունիլ, ևն.
(Ստոր.) ՄՈՒՍՍՈՒՅԱ ՖԷՀՄԻ

Ն. Վ. ՊՕՂՈՍ ԲԱՇԱ ՆՈՒՊՍՐ
ԵԱԳՈՒՊ ԲԱՇԱ ԱՐԹԻՆ

ՄԵՐ ԲԱՇԱՆՈՐԴԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և Եթովպիոյ
բաժանորդներէն կը խեղդուի որ հա-
ճին վստիւթացնել իրենց բաժնեկրինե-
րըն, նկատելով որ տարւոյն իննբորոգ-
ամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժա-
նարկներ մեզի խնայած կըլլան մաս-
նաւոր դիմումներու առթիւ ըլլալիք
ծախքերէն և ժամավաճառութիւն-
ներէ :

« Արշարյս » ի արախիս աշխատ-
կիցներէն Փաստաբան Մեքըր Յար. Լ. Ս.
Շաւիկեան. Օսմ. Սահմանադրութեան մա-
սին իր գեղեցիկ և իմաստալից խորհր-
դածուրիւնները ընկեալ յետոյ, այս ան-
գամ կարկաճ յորդանանաւոր մը « Ընկերա-
յին Հարցեր » խորագրով ներկէ, որ ըն-
սանկեան կարգ ու սահման կը շոշափէ :

Հոգ չե թե յարցելի Փաստաբանին
յայտնած կարծիքներուն ինչ ինչ կէտերը
հաւատարմապէս անեմուն ալ մտածեալե-
րից չի յարմարի, բայց խնդիրը այն-
չափ շանկեալ է որչափ կարեւոր : Եւ ի՛նչ
է արդեւ ազգ մը՝ երբ ընսանկեան կարգը
խախտու հիմնու վրայ դրուած է, վեր-
ցուր ընսանկիք ու ազգն ալ ինքն ըստ
ինքեան ոչնչացած կըլլայ : ԽՄԲ.

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԿԻՆԸ ԵՒ ԻՐ ԳԵՐԸ

Երբ անհասար կը ծնի՝ կը գրաւէ
տեղ մը մարդկային ընկերութեան մէջ
միասին բերելով իր գործունէութեան
բաժինը, այդ գործունէութիւնը թէ՛
պէտք համահաւասար էրիկ մարդուն և
կնոջ համար՝ իր ծանրութեամբը և
պատասխանատուութեամբը, նոյն ձե-
ւին ներքեւ չի ներկայանար սակայն
բոլորին համար, այդ գործունէութիւ-
նը թէ՛ պէտք հաւասար այլ չ'է սակայն
նոյնատեսակ կամ թէ՛ տարբեր բաժով՝
կայ աշխատութեան բաժանում մը, և

ամենէն ակնառու բաժանումը որ եր-
բէք կարելի է երեւակայել, այն ալ այր
մարդուն և կնոջ գործունէութեան և
աշխատութեան բաժանումն է, այս բա-
ժանումը արուեստական չէ և ոչ ալ
անստագաներու ծրագրածը, այս բա-
ժանումը կը ներկայանայ երկու սեռե-
րու կազմախօսական բնախօսական
տարբերութեան մէջ, կնոջ վիճակ-
ուած է սան գործունէութիւնը, և է-
րիկ մարդուն՝ ինչ որ կը մնայ տունէն
դուրս, այս բաժանումը ամէն ոք իր
գերին մէջն է և որով կրնայ արտադ-
րել ամենաշատ արդիւնքը : Եւ աշխա-
տութեան այս բաժանումը՝ ինչպէս հա-
կատակը կարծողներ կան՝ շուրհի
ընդ-
հակառակը իր մէջ նուաստացուցիչ ա-
մենաթեթեւ նշան մը : Ըստ որում կին
մը անաջին օրէն պէտք է պատրաստուի
տան վարչութեանը համար, և իր
գասախարակութեանը մէջ կ'ընէ ոչ միակ-
զէթ լայնկէկ անդ մը գրաւելու է առ-
անին գործերու տնտեսութիւնը, առա-
ջին օրէն պէտք է սորվի իր գերին գի-
տակցութեանը իբրեւ ամուսին և իբ-
րեւ մայր : Միեւնի ընթերցողը չի կար-
ծէ թէ զիրին բան մ'է առն մը կա-
ռավարելը, աւելի հեշտին է քաղաք
մը կառավարելը քան թէ տուն մը :
Նոյնպէս չի կարծուի թէ՛ ինչպէս բա-
ղը ձուկն ելլելուն պէս առանց առաջ-
նորդի, առանց ուսուցչի, զէպի ջուր
կը դիմէ լողալու համար, այդպէս ալ
աս ու ան կ'ընէ կրնայ բնազգորէն տի-
պար ամուսին մը և տիպար մայր մը
ըլլալ : ո՛չ, պէտք է պատրաստուի
առոր համար :

Ըսել է կնոջ համար հետեւելիք
լաւագոյն ուղին է նախ պատրաստուիլ
տնտեսութեան մը ըլլալու և յետոյ հե-
տաժող ըլլալ ամուսնախալու : Կ'ընեմ
թէ սախ լաւագոյն ուղին է, որովհե-
տեւ ամենէն բնականն է :

Բայց եթէ աստիճանը լոկ իր կամ-
քէն կարեալ է, եթէ ամէն աղջիկ բա-
րի կամեցողութիւն մը ունեցած ժամա-
նակ կրնայ իր բացիկ այն ամէն օգտա-
շատ գիտելիքները որոնց ամբողջու-
թիւնը կը կազմէ արեւոյ տնտեսութեան
մը ըլլալը : Նոյնը չէնք կրնար ըսել
զժրատաբար երկրորդին համար, լոկ
աղջկան մը կամքէն կարեալ չէ ամուս-
նութիւնը, պէտք է տրամադրելի ա-
մուսին մ'ալ գտնուի, և այս « տրա-
մադրելի ամուսինը » երթալով գոտա-
րակնէիտ հանդոյցի մը կերպարանքը
կ'առնէ :

Ինչո՞ւ
Պատճառը բարդ է, նախ ամուս-
նութիւնը իր հետ կը բերէ՝ սխալ հաս-
կըցում քաղաքակրթութեան մը հետ
ծախքերու խիստ զգալի յաւելում մը,
և երկրորդ, ինչ որ առաջինէն ա՛լ
աւելի կարեւոր է, կրկու կողմերու բը-
նաւորութիւններու անյարմարութեան
պարագային ամուսնութեան լուծանելի
կամ անլուծանելի ըլլալու հարցը :

Ամէն անոնք որ ընկերային հար-
ցերով կը շահագրգռուին, այդպիսի-
ներու վրայ բարոյական պարտականու-
թիւն մը կը ծանրանայ քարոզել ըլլայ
զբիշով ըլլայ բանի բերանոյ աւելորդ
ծախքերու վտարումը՝ տան սեմէն
դուրս : Եւ այս աւելորդ ծախքերու
բաժին մէջ լայն տեղ մը կը գրաւէ
ժայրանկողութեան տարուած նորաձեւու-
թիւնը :

Գալով երկրորդին, այր և կնոջ
փոխադարձ պարտքերը և իրաւունք-
ները գծող, ամուսնութեան ծնելիք
զաւակաց վիճակը ճշդող, ինչպէս նա-

յանձնելուն համար . բայց անսնք որ ազգային գործերուն և էնթրիկներուն հետամուտ կ'ապրին , չ'պիտի մեղադրեն Քաջան , իր քանակաւ առաջարկին համար . հետեւեալ ուղղութեամբ մտածելով :

Ազգայնագրից ազգայնները Պատրիարք Օրմանեան Սրբազանը մեղադրեցին հրապարակաւ իր բնութեամբ գործերուն համար ալ . և այդ գործերէն մէկն ալ Ազգայնագրից թեմական վարչութիւնը կազմելը և նոր կանոնադրութիւնը հաստատելն էր . հետեւեալ անոր Ազգայնագրից թեմական վարչութեան համար ըրած վաւերացումն ալ , մեղադրելի և անվաւեր համարուած գործերուն շարքին մէջ կ'ընկնայ :

Ասկէ զատ Պօլսոյ կեդր. վարչութիւնը հիմայ կազմուածեալ վիճակ մը ունի և մինչև նոր ընտրութիւն և նոր անօրէնութիւն պէտք է թեմական գործերուն սրարիւղ զօն պահպանել մինչև որ սրբ. ուղղութիւն մը առնեն կեդրոնին վարչային գործերը :

Երրորդ . Վ. Բարթոլոմէոս , Կ. Պօլսէն Վ. Պօլսոս բաշայի անունով զրկուած հրահանգին ուժով Ազգային պաշտօն ստանձնած է : Պէտք է զիտնալ ուրեքն թէ Վ. Պօլսոս բաշայ հաւանութիւն պիտի առնոյ որ Վ. Բարթոլոմէոս ազգային գործերէ հեռանայ . այն ալ վշտանալով և գոյքերը յանձնէ՝ առանց իր անձնական պատասխանատուութիւնը ճշգրտելու :

Եթէ « Առաջիկ » ին ոճով յեղափոխական ըլլայինք , կամ Արեւին գործածած սօճերը առարական կենցաղագիտութեան հակառակ չը գտնէինք , Վ. Բարթոլոմէոս մեղադրելի պիտի համարէինք . բայց իրականութեան մէջ նոյն բանը չը պատահիր . . . :

« Առաջիկ » Եզրագրութեան հետք է և միջավայրին պահանջած փոփոխականութիւններուն անձանթ . իսկ « Արեւ » մասնաւոր գիտումով և թաքուն նպատակներով իրաւ կամ անիրաւ յարձակիլ կուզէ միշտ Վ. Բարթոլոմէոս բաշային դէմ : Այսպիսի յարուած պարագաներու մէջ է որդէն որ ազգին իրական շահերը նը կատարութենէ կը վրիպին : Այս է մեր կազմած համոզումը դէպքերուն խորագէտ երազէկ ըլլալուս պատճառաւ :

Գալով Գեր. Առաջնորդին , որ ինչպէս կերելի , ամէն հոլիերէ շարժելու մեծ տրամադրութիւններ ցոյց կուտայ , պզտիկ սխալ մը գործած չ'պիտի ըլլայ - եթէ « Արեւ » ին գրածները ստոյգ են - կառավարութեան անկողնութեանը գիտելով , որովհետեւ Բարթոլոմէոս ալ ազգային իշխանութիւնը ներկայացնող մէկը եղած է մինչև ցարգ և է . հետեւեալ « սուրի հարուած շտրին մէջ » ասացուածին իմաստը հաստատած պիտի ըլլայ իր պիտրոնովը , որուն ուժը նոյնը չ'մնար կը կարծենք՝ Օսմ . Մահմանաբուլթեան վերահաստատութենէն յետոյ . . . :

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ « Բիւզանդիան » ի 6 Օգոստոս 3598 թուոյն մէջ հետեւեալը կը կարգանք .

« Երէկ ամբողջ մը խռնուեցաւ Օրմանեան Սրբազանի բնակարանին առջև , պահանջեց որ անմիջապէս Պատրիարքարան փոխադրուի , իր ստահողութեան ներքև առնուելու համար : Կառք մը բերուելով , Օրմանեան նուսեցաւ շրջապատուած ոստիկաններէ , զբաշտութեան համար : Հետագային անհամար բազմութիւն մը կը հետեւէր կառքին , երբ կառքէն կ'իջնէր , կարգ մը մարդիկ յարձակեցան իրեն վրայ , բայց Օսմ . Կոմիտէին Սէլանիկի

նատուրակութենէն երկու սպաներ միջամտելով , վերջ տուին այս փոթորիկին - յետոյ նոյն սպաներն Օրմանեանի հետ առանձնանալով սենեակ մը , երբ ըսին թէ Ազգին հաշիւ կը պահանջէ իրմէ : Օրմանեան պատասխանեց , « Ես պատրաստ եմ հաշիւ տալու , ամէն ժամանակ , նոյն իսկ վաղը , թող յանձնախումբ մը կազմուի և քննէ հաշիւներս » : Կոմիտէին անդամները , այս հաւատարմութիւն վրայ առաջարկեցին Օրմանեանի որ այս պայմաններով կ'ընայ իր տունը մնալ , միայն թէ Օսմ . Կոմիտէին երկը անգամներ պիտի հակեն իր վրայ նոյն իսկ տունը մէջ : Օրմանեան համակերպեցաւ և պատասխանեց թէ՛ « ամենայն սիրով նոյն իսկ կ'ընաք նշանակեալիս մէջ պառկել , որովհետև խոյս տալու և հաշիւ չ'տալու ո՛չ պէտք ունիմ և ո՛չ ալ պատճառ » :

ՄԵԿՆՈՒՄ . . . ՌՈՒՄԱՆՈՒՄ հաւր , որ արարողները Պօլսոս փոխադրելու համար վարձուած էր , ուրբաթ օրը մեկնեցաւ , բայց որովհետև « Կոմիտէին » կողմէ խոստացուած մէկ մէկ ոսկին տրուած չէ եղեր , ճամբորդները խնդիր հանած են խաբուած ըլլալուն համար :

Նաւը ետ դարձած է և 27 ճամբորդներ , որոնցմէ 14 ը Հայ , ոստիկանութեան յանձնուած են :

Աւելի մանրամասնութիւնք ուրիշ անգամներ : Ռուսներու նաւով մեկնողներէն չ'պիտի մոռնանք յիշատակութիւնը Պ. Վահան թէքեանի , որ այնչափ արժանապէս վարեց ատեն մը « Լուսաբեր » ի խմբագրութիւնը : Պ. Մ. Տամատեան ընտանիքով միեւնոյն նաւով Պօլսոս մեկնած է քանի մը շաբթուան համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՇՆԵՐԸ . . . Կիրակի երեկոյ Ռուս Լարակի երկու թրամվէյները 20 է աւելի տեղայններու կողմէ պաշարուած և կուլպատուած է : Տասնիակ մը վերադարձներ կան : Թէև ոստիկանութիւնը ձերբակալու մներ և քննութիւններ բացած է - բայց կերելի թէ ազգասիրութիւնն է . . . պատճառ այս ծանր միջադէպին : Ասկէ վերջ ազգասիրական այս շախմատներէն զբոշանալու է . . . :

ՀԵՌԱԳԻՐ

Սերուսդէմ 10 Օգոստոս . - Օսմ . Մահմանագրութեան վերահաստատման ի պատիւ խորհրդանութիւններ տեղի կուռնեն հոս : Առնց ուշ մնալուն պատճառը այն է որ՝ կառավարիչը հետագայով ստացած լուրերուն հաւատարմութիւնը չ'էր , Սրբապ . Գրիստանեայ և երկու հասարակութիւնները եղբայրարար թափուր կազմած՝ ազատական վերտառութիւն կողմը զրոյակներով կը շրջագային փողոցները :

4. Պօլսոս 10 Օգոստոս . - Սուլթանը կը վախճայ թէ իր անձնական հարստութեան մեծ մասը պետական գանձուն վերադարձնելու պիտի ստիպուի : 4. Պօլսոս 11 Օգոստոս Սուլթանը խորհրդարանի յատուկ պալատի մը շինութեան ծախքը իր քրակէն ընել կ'առաջարկէ : Ձեռք առնուած բարենորոգումները ի միջի այլոց արամադրեն զեպաններու փոփոխումը լրտեսութեան գաղտնի վարկին ջնջումը և գրաքննութեան դրուած

բազմաթիւ գիրքերուն վերադարձուիլը՝ իրենց արտոյ :

4. Պօլսոս 12 Օգոստոս . - Պալատական բազմաթիւ պաշտօնատարներ բանտակուած են : Երեսուցիք թուրքերը նաև մը վարձած են մինչև Տարտանել ուղղով : Եզրագրութեան հասնող տարագրակները գրամուտու համար :

(Մ . Խ . Երանի՛ թէ այդ առթիւ ըլլալը ծախքերը Պօլսոս հասնողներուն մէջ բաժնէին :) 4. Պօլսոս 12 Օգոստոս . - Ֆրանսական զեպան Պ . Գոնթան հոս հասաւ : Ուրբաթ օրը Սուլթանին կողմէ պիտի ընդունուի :

4. Պօլսոս 13 Օգոստոս . - Նաւով բաշա Բարիկի զեպան անուանուեցաւ : Ֆուսա բաշա՝ որ Գամակոս քաղաքուած էր , հոս հասաւ և խանգալու ընդունուելութեան մը առարկայ եղաւ :

4. Պօլսոս 16 Օգոստոս . - Պատերազմական նախարար Բէճէպ քոյա մեռած է : Նոր նախարարին յանկարծական մահը կատակներ յարուցած է և անգամազննութիւն տեղի պիտի ունենայ մահուան պարագաները հաստատելու համար :

4. Պօլսոս 17 Օգոստոս . - Կառավարութիւնը մեծ ահբոթութեանց հաւանութեամբ կուսուսմասիրէ Գարիթիւս սիօններու բարձուը :

Վրդովեցուցիչ նոր լուրեր կը հասնին Մուսուլէն և Տիարպէքերէն : Մուսուլներու խմբակցութիւն մը նոր վարչային գրութիւնը ընդունել կը մերժէ : Տիարպէքերի վալիին համարիտ է այս վերջիններուն :

ՍՏԱՅՈՒԱՄ ԳԻՐԿԵՐ

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ Բերթուածներու ֆրանսերէն թարգմանութիւնը POEMES . Գնել փափաքողները հետեւեալ գրավածաններուն պէտք է գիտնեն , որոնք Mercure de France ներկայացուցիչներ են : Delbourgo LeCaire Diemer Alexandris Racamouli

ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԿ

FABRIQUE de Fleurs artificielles POUR BOUQUETS de NOCES, PANIERS, COUBONNETS ET FLEURS de CHAPEAUX No 2 B Hohelakoff ԶԻՆԻՆ ԼՈՒՍԻԿ Պ . ՉՈՒԱԲՈՍ ՄՈՒՍԻ ԾԱՐԱ ՄԻՋԵՅԻՆ ԼՍՏԻՆՍԿ ԵԿԵՂԵՑԻՆՈՅԵ ԺԻՇՏ ԴԻՄՍՏԸ ԱՐՈՒՍԵՍԿԱՆ ՍԱՆԿԵՐՈՒ ԱՐՇԱԿՅԵ ՀՊԵՐԱՆԿԱՆ զեղակաւով պողոզներու , շքեղ ծաղիկեղջերու , պսակներու և թղտրի (չափա) հրաշագեղ ծաղիկներ ունենալու համար մի գիտէք այլուր : Մեր գինները զերամատչելի են և սպարները անմրցելի : Փորձի համար անգամ մը այցելուը , ապահովագէտ մեր մնայուն յաճախորդ պիտի ըլլայ : Մեր ատրիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի :

31-43 ՏԻԿ . Լ . Պ . ՉՈՒԱԲՈՍ ՍԵՂԱՆՍՈՒՐՈՒԿԱՆ ՏՈՒՆ Մուսի փողոց թիւ 6, Սիմկերի մասնաձեւի իմ , Ժիւսիերի դիմաց . Կը գնէ և կը ծախէ հարպարակի վրայ շրջաբերող թուր կարերու արժեթղթերը , մասնաւորաբար Բրէտի Ֆոնսիէի հին և նոր , Բուժէլի երկաթուղեայ և Բանումայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը , որոնց սկզբէն ց'այսօր չ'անող թիւերուն ցուցակներն ալ ունի : Արժեթղթերու արդի խիստ նպատուաւոր գներէն կրնան օգտուիլ Եզրագրութեան մեր ազգայինները մեզի գիտնելով :

ՍԵՂԱՆՍՈՒՐՈՒԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիմկերի մասնաձեւի իմ , Ժիւսիերի դիմաց . Կը գնէ և կը ծախէ հարպարակի վրայ շրջաբերող թուր կարերու արժեթղթերը , մասնաւորաբար Բրէտի Ֆոնսիէի հին և նոր , Բուժէլի երկաթուղեայ և Բանումայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը , որոնց սկզբէն ց'այսօր չ'անող թիւերուն ցուցակներն ալ ունի : Արժեթղթերու արդի խիստ նպատուաւոր գներէն կրնան օգտուիլ Եզրագրութեան մեր ազգայինները մեզի գիտնելով :

Մասնավճարներով - 25, 50, 100-կարելի է արժեթղթերու տրամալ , և մասնաւոր պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել : Սեղանաւորական ամեն անակ գործառնութեանց , և առեւտրական ամեն կարգի Պոլսոնը զեղչելու պատրաստակամութիւն : Սեղանաւորական և Պօլսոյի գործառնութիւններ և այս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

Բուժէլի երկաթուղոյ վիճակահանութեանց պահագ Օթթոմանէն երաշխաւորեալ և վաւերացեալ քրովեստիկ գնել ուղղութեան համար՝ լաւ պատեհ հոթիւն մէկ մեզի գիտնել , որովհետև պահագ Օթթոմանէն ուղղակի կատարանք յիշեալ քրովեստիկ : 12-50 ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

Հ Ա Մ Ե Լ Ե Ց Ի Ն Ե Ր Ը Կ Ս Մ Հ Ա Յ - Ի Ս Լ Ա Մ Ն Ե Ր Ը

Շատերու ակնջին գուցէ խորթ գայ և հարցնեն « մի՞թէ կան հայ խումբեր ալ , անոնք երբ կ'օրհնեն փոխեցին » քիչ վերջ կորուսեցան հայութեան համար : Ժիշտ է չ'ա՛տ տեղեր , ուր հայեր իսլամութիւնը ընդունելով խորուսեցան տաճկաց հետ , աննշան հետք մը միայն ձգեցին . այն ալ քանի մը եկեղեցոյ աւերակներ . թողի , տեղի և գիւղերու անուներ : Սակայն այն հայ - իսլամները որոց համար հիմայ պիտի խօսիմ՝ պատմութեան կամ աւանդութեան միայն չեն պատկանիր հապա՛ գարգ աչքերուն առջևն են :

Թէև իսլամացած բայց մինչև հիմայ կը պահեն իսլամութիւնը ընդունուած չող գծեր , շա՛տ գիւղեր զեւ կը խօսին հայերէն . կան ընտանիքներ որք կը կոչուին Արեւօզլի . ձերմակօզլի . Թու՝ մանօզլի եւայլն . վարդավաղ կը տունեն մեզնից աւելի փայլուն կերպով , ունին մասնաւոր խաղեր , երգեր և աղօթքներ . ձերերը ունին ճոխ աւանդութիւններ և կը ըսեն թէ « Մեր հիւները Անի քաղաքէն եկած են , Անին շա՛տ մեծ քաղաք էր . այնպէս որ եթէ Աշխարհ ամբողջ կործանուէր Անին մինակը կրնար վերաշինել . բայց եթէ Անին քակուէր Աշխարհ միացած չէր կարող վերականգնել » ինձ վերին աստիճանի հետաքրքիր երեւաց անոնց կենդանի նկարագրութիւնները , կարծես պակարէն մնացած ազգայնութիւնը տակաւին կը փայլէր իրենց աչքերուն մէջ : Կը խօստովանին թէ՛ ժամանակին բնութեան տակ կրօնափոխ եղած են :

Այս ոչ - ֆրիստանեայ հայերը կը բնակին աւելի Սեւ ծովու Մարավրի (Maravri) գիւղաքաղաքին լեռնային մասէն սկսելով մինչև Տորոսի . (Պատմութեամբ) հարեւան լեռնագոտիները : Այս վերջի մասին մէջ աւելի շա՛տ կը խօսին հայերէնը՝ քան տաճկերէնը , նոյն իսկ շա՛տ կ'ենին հայերէնը միայն կը հասկնան :

Համէնցի կիւնը ունի հին հայը յատկանշող հպարտացուցիչ երեւոյթ , նախ շա՛տ աւելի մաքուր կը հաղութ քան ծովեզրեայ Լազի թափթփած ու զարդարուն կիւները , հազուատի ձեւը լուրճիկն տարբեր է , կը կրէ խիստ երկայն ու սիրուն գուլպաներ , ստեպ ասեղնագործուած , որք կը պարփակեն ներքին թէպէտ մերկութիւնը , ունին սիրուն տրեխներ , որոց կապերը օձապատոյտ կը զարդարեն կլոր ու խոշոր սրունքները :

Սրունքները իրենց կարգին կը փայտալուին կարճ շրջագծեալ ալեւեւ տարբերութիւններէն : Գեղեցիկ մէջքը գօտիով մը կը հաղորդակցի կրթեալին հետ . այս ալ միշտ անգաղտնապահօրէն կուրծքին հարստութիւնը կը մատնէ : Իսկ երբ՝ թեւերը ու ոտքերը շարժելով դար ի վար կ'իջնայ՝ հին ասպետները կը յիշեցնէ կարճ շուրջառածեւ վրանոցովը , որը վեհօրէն կը ծածանի հովէն :

Գլուխը՝ ինքզինքնէն գեղեցիկութիւն մը կ'աւելտէ , վկայութեամբ երկու հատ անոյշ աչքերու , երկայն բերբեր ալ գուն կուտան բնութեան իւրնամով գծած յօնքերը զիտու ու հիւսնալու . ակնթարթի մը մէջ մարդու հիացումը կը տարածուի դէմքին ամեն կողմը , եարծես թէ այնտեղի նուաբը իրենց գոյնը Օրբորդներէն փոխ առած են :

Այս գեղեցիկէ աւելի դէմքը երբեմն կ'աւալուանի կը փոխուի երբ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՒԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀՅԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գնեցող ունենալու կամ վաշխելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատուներ :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անդամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներն :

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայցի մեր վաճառատուներն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է :

Մեր վաճառատուներ վերջապէս, զիններու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ազապոյններէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրոքտօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

չղարչանման գունազոյգ լաշակը, որ գլխանոցէն վար կախուած է չարածճիւրօրէն կը բեկբեկի մարդու ուշքը զեբելու համար, Համեստ ալ են :

Այր մարդիկ գործունեայ են, Լազերու պէս մինչև վերջ չեն քնանար : Հազուադէպ մէջ թէև ազատ, բայց կը զանազանութիւն իրենց սուղ գոտիով, վերաբերուով և բաճկանով, Համէնցիները կ'արտասանեն իրենց յատուկ եղանակով :

Կ'ըզաղուին առնասարակ խաշնաբաժնեմբ, երկրագործութեամբ և հացագործութեամբ, այս վերջի արհեստը զիրենք կը մղէ ուստի զանազան կողմերը՝ մինչև ևստարիտ սահմանները : Լաւ կը շահին և ամեն տարի փոխնիփոխ ընտանիքներն անաշաւու կ'ուզան : Զօրեղ կազմ ունին, հիւրասէր են տեղ տեղ, կերակուրներն պարզ և սննդաբար են :

Կարծիք կայ որ, Համամ իշխանը այդ կողմերը չէնցնելու համար Համամայէն և ապա Համէնցի կոչուած է, բայց աւելի հաւանական է Համայսինքըն մէկ և չին բառերու կցորդութենէ առաջ գալը : Ինչու որ աւանդութիւնը կը թէ մէկ անգամով եկած գաղթած են, և ծովեզերեայ Հազերը այն ատեն իմացած են, երբ զետեղը իրենց հետ տաշուած փայտի կտորներ ծովը կը թափէին :

Քրիստոնեայ Հայ - Համէնցիներ չա՛տ քիչ մնացած էին, երբ ևս տասն եւ երեք տարի առաջ այն կողմերը կը ճամբորդէի, իսլամները կը փափաքէին ասոնց հետ խնամութիւն կնքելով վերջակէտը զնեղ կրօնքի տարբերութեան, բայց Աթրիայի (Լազիստան) կողմերը գտնուող մէկ երկու ընտանիքներ նախամեծար կը համարէին տուն տեղ թողնելով ուստի զաղթել :

Կը գտնուէր հինէն մնացած վանք մը բոլորովին անբնակ, մէկ բարեկամիս մօտ տեսայ քանի մը ձեռագիր ազօթագրքեր, իբր շամանթաղ մը Քրիստոնէական անցեալին :

Ռուսաց սահմանի մօտ Խոփէ աւանի շուկան կը գտնուէի որ մը, երբ իսլամ Համէնցի Օրիորդ մը կը կանչէր իր եղբորը, «Մօ՛, Հասա՛ն հոստա՛ տրի, եւայն » : Այն ատեն արեւցայ եւ ինքնովին ըսի մեր հայրենի լեզուն արդեօք ո՛րքան ասեմէ իվեր գերի կը մնար այս կողմեր . . .

Այն ատեն կանոնաւոր վիճակագրութիւն մը գոյութիւն չ'ունենալուն չ'կարողացայ ստոյգ գիտնալ բնակչութեան թիւը, բայց մէկէ աւելի տասնհազար հազարներ ըլլալու են :

Հետզհետէ հայերէնը մարը կը մտնէր հոն, ինչու որ Մօլլաները թըրքերէրէր եւ արաբներէնը կ'ուսուցանէին նոր սերունդը կօտարանար այլեւս :

Ասկէ վերջ, երբ ինքզինքնիս մտղովներ, ի հարկէ մեր ազգային դիտակցութիւնը մեղ պիտի հրամայէ մեր օտարացած եղբայրներու ամեն կերպ հոգ տանելու, թէ կո՛ւ զ' ըլլան Համէնցի կամ Քրիստոնեաներ :

Մեր քաղաքակրթութեան պտուղներէն մին պիտի ըլլայ, անոնց գիտակցօրէն դարձը, ինչու որ կրօնքը անհատին եւ Արարչին միջև անսխալ խնդիր մը ըլլալով՝ շա՛տ թիւով պիտի ըլլար սպասել որ, Ազգ մը ամբողջովին պարտաւորուէր միեւնոյն զգացումներով տողորուելու : Ուստի մենք բոլորովին վարժուելու ենք ազգութիւնը եկեղեցիէն դուրս աւելի ճանչնալու :

Այն ատեն Համէնցիները կը դառնան մեզի պէս հայեր :

Օ . ԹՈՒՄԱՆԱՆ

ՅԻՍՈՒՆ ՀՍՁԱՐ ՈՍԿԻՆ

ԵՒ

ԴՐԱՄԱՇՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Աղէքսանդրիոյ «Արև»-ին 13 Օգոստոս 82 թ. թուոյն մէջ խորհրդածութիւն ներշնչող լուր մը կը կարդանք, հոգ չէ թէ «Արև»-ին մինչև ցարդ ցոյց տուած տեսակ մը յաւանորոշուողութիւնը մեր այնքան վրեպած չ'ըլլայ . . .

« Կ . Պօլիսէն կը գրէ «Արև»՝ Աթէնքի թերթներուն - Արևին աղբիւրը հաւաստի ըլլալուն վրայ անշուշտ չէք տարակուսիր . . . ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ անցած շաբաթ օր Կ . Պօլսոյ մէջ ձերբակալուած է, իր մէկ քանի հայրենակիցներու յայտնութեան վրայ, կասկածելի հայ մը, որ կամբաստանուի թէ հեղինակն է սպառնալիքի նամակին որ զրկուած էր վսեմ Պօղոս բաշա Նուպարի եւ որով, իբր թէ յեղափոխութեան գործածուելու համար, 50 հազար ոսկի կը պահանջուէր : »

Այս լուրը որ Արևի միջոցաւ կը հաղորդեն մեզի Աթէնքի թերթերը - թէպէտեւ այդ թերթներուն անունները թիւր և թուականը խնամով վերապահուած են - կը մտնան անտարակոյս որ ինչորոշ ատարակայ 50 հազար ոսկի նամակը ո՛չ թէ Պօլիսէն հապա՛ Գահիրէի նամակատնէն ձուլուած ըլլալը ծանուցուած էր տեղական բոլոր թերթներուն մէջ ալ : Պահ մը ենթադրենք թէ Պօլսո՛ւ եւ զրամաշորդ մը ձերբակալուած է, թէև Օսմ . սահմանադրութեան վերահաստատումին և ընդհանուրներում շնորհուելու վայրկեաններուն մէջ նոր ձերբակալումները անտարամբանական են, սակայն ո՛վ էր այդպիսի նամակ մը սա Գահիրէի նամակատան տուփը ձգողը : Հանելուկը հոս է :

Արևը սրբիմ, «Արև», ըսէ՛, հոգիդ սրբիմ, վերայիցով քանի մը տողերը հրատարակելով, միտքերը ուրիշ կողմի վրայ դարձնելու սպաւորութիւնը չ'իսթողուր և ուղղամտութիւնդ կասկածի ներքեւ զնել :

ՄԵՐՍՆԵՍ

ՕՐԹԷԼ ՏՐԱՊԵՉՈՆ

ԱՂԷՔՍԱՆԻՐԻՍ

Գանթօ, Սուգուլ Մանկար

3 Թէքի իեթ-եշ-Գալլանի փողոց 3

Մանկարի Մզկիթին դէմը

3 Թիւ 3

Պանդուկապետ - Մ . Գէորգեան

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օդաւէտ գիրքով սոյն պանդուկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութակած սպասարկութիւն :

Գիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք :

Գինքը չափաւոր են . 28-55

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից


Աչխարի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԸՐ-ներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիւսյակաւ և մեայնեմով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցի իսլիմ մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՐՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՒԹԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐ յաճախչիս

ՍՍՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փօօկրափներու և կազի վառարաններու :

Տասներկու տարիներ «Սինկըր» Ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղել յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնտանթիուի քով պաշտօնեայ է զենքերու և մեքենայարդարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախողներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարապոյ ժամերը պիտի արամազրէ կարի մեքենաներու, ֆօնօկրափներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան զիմել իր տունը Պապը - Շէրիէի կողմը Շարա Պէղղալա՛ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, և դարձեալ զիւրութեան համար քարթ բօտաւրով մը կրնան զիմել «Արշալոյսի» Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ :

ՆՊԱՐԱՎԱՃԱՍՈՒ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԵՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻՔ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնայուն գիրք մը բռնած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախողները գոհ թողելու նպատակաւ՝ սպասուելի ապրանքներու ընտրութեան և գնումին ատեն շատ խնամք և նոյն իսկ բժանդրութիւն կը ներք : Ուրիմ նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է և մաքուր մեր քով :

Կշիւր, որուն համար ուրիշ շատ սեղեր զանազատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առթած է . վկայ մեր բազմաթիւ յաճախողները, որոնք միշտ գոհ մնացած են :

Չեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար զիմեցէք ի Պապ-Էլ-Խալա՛ մեր վաճառատեղին և չ'պիտի զղշաք :

16-44
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ